

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝
Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության
հետևալ թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսագիտական վերլուծությունների բաժնի պետ (30-2.2-8)

Բաժնի պետը՝

- Ղեկավարում և ցուցումներ է տալիս Բաժնի աշխատողներին հաշվառումը վարելու, ենթակա կազմակերպությունների ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների ընդունման, տնտեսագիտական վերլուծության և ամփոփման աշխատանքների կատարման ուղղությամբ.
- Ապահովում է նախարարության ենթակա կազմակերպությունների բոլոր ճյուղերի ընդհանրացված հաշվետվությունների ստացումը, դրանց հիման վրա նախարարության ամփոփ հաշվետվության կազմումը և համապատասխան մարմիններին ներկայացումը, Աշխատակազմի ընդհանրացված հաշվետվությունների ստացումը և համապատասխան մարմիններին ներկայացումը, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից ծախսերի հատկացումն ապահովող հաշվապահական և ֆինանսական գործառնությունները,
- Մասնագիտական և ծառայողական պարտականությունների շրջանակներում մեթոդապես օժանդակում ու հետևողական աշխատանք է տանում համակարգի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման վարման գործընթացին՝ ՀՀ հաշվապահական հաշվառման օրենսդրությանը համապատասխան.
- Պարբերաբար մասնակցում է իր լիազորությունների շրջանակներում համակարգի կազմակերպությունների գույքագրման, փոխադարձ հաշիվների ստուգման, ընդունման-հանձնման, լուծարման և մասնավորեցման գործընթացներին.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է նախարարության աշխատողների սոցիալական փաթեթից օգտվելու համար հատկացումների տրամադրման աշխատանքներին:
- Վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.
- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- տնտեսագիտություն (էկոնոմիկ) և կառավարում (մենեջմենտ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական

պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:

- «Հաշվապահական հաշվառման մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

- անհրաժեշտ տեղեկատվություն տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձի չափը՝ 256,623 ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 28.08.2018թ.